

ՃԵՄԱՐԻՏ ԱՐԺԱՆԻՔԻՆ ՄԱՐԴԸ



հծանուն բանասեր մը և պատվական մտավորական մը, պրոֆ. Աղոնց, 1929-ին, Փարիզի մեջ Դուրյան հոբելյանի առթիվ կատարված հանդեսի միջոցին ի պատիվ հոբելյարին արտասանված զեղեցիկ ճառի մը մեջ վերլուծելով անոր նկարագիրը, իբրև անոր հարացուցական պատկեր ներկայացուց Ս. Մեսրոպի մահվան առթիվ խորհնացիի Պատմութեան վերջին գլուխին մեջ տողված սա հատվածը. «...Գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք: Քանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն ի նորա վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին. այլ հեզ և լաւկամ և բարեխորհուրդ գոյով, և երկնայնոց զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր: Վասն զի գոյր տեսեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անհաս, խորհրդականութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ»:

Հայ պատմահոր այս կտորը, դամբանական ներբող մեր գրականութեան հիմնադրին և Աղգին ու Եկեղեցիին մտավորական և բարոյական մեծագույն փառքին, գրված ըլլալով, ինչպիսի կհաստատե արդի քննադատութիւնը, սուրբին վախճանումն երկար տարիներ՝ շուրջ երկու դար ետքը, ա՛յդ պատճառով նույնիսկ կնեղակալեն մեծ կարևո-

րութիւն. անիկա մեկ կողմն կհասկցնեն, թե Աղգին սրտին մեջ դարեր ետքը որքան խոր և ջինջ պահված էր մեծ երախտավորին հոգւոյն տպավորութիւնը, և մյուս կողմն ցույց կուտա մեզի զաղափարական այն տարազը, տիպարը, որուն մեջ կկաղապարեր հայութիւնը մաքուր, բարի, արդյունաշատ, հայրենասեր և մտքի ու սրտի շնորհներով զարդարված կրօնավորին դեմքը: Այդպիսի մեկը միայն կրնա և պարտի եղած ըլլալ արդարն մեր եռամեծ սուրբը, Մեսրոպ. և իր Աղգին հոգեւոր և իմացական ծառայութեան լծված որեւէ եկեղեցական այնքան ավելի ճշտիվ կիրազործն իր կոչումը, որքան ավելի իր ձգտումը մոտ տանի զինքը անոր նմանութեան: Աղոնց՝ հանդիսական պատշաճութեանց զգացումն թելադրված «գլուտ» մը չէր որ կընեն այդ միջոցին, Դուրյանի նկարագիրը մոտեցնելով իր գերազանց տիպարին. այլ իրականութիւնը միայն կմատնանշեր՝ որքան զգացումով նույնքան նաև համոզումով, մոտեն ճանչցած և սիրած ըլլալով անոր մեջ ճշմարիտ արժանիքին մարդը:

Ա՛յդ եղած էր զգացումը, արդարև, նաև ամենուն, իր բոլոր աշակերտներուն, Դպրեվանքի իր առաջին տարիներն, ուր ոչ թե իբր տեսակ մը մտազոհութեամբ, այլ հետըզհետե մեր սիրտերուն մեջ բազմող մտածումով, մինչ մեր մյուս մեծ ուսուցչին և հոր, Օրմանյանի, այլապես և բարձրորեն այդ արժանավոր հոգեւորականին մեջ ճիգ կընենք տեսնելու մեծին Սահակա կազմա-

կերպող տաղանդին, մշտարթուն մտքին և անդանդադ կամքին պատկերը, Դուրյանի դեմքին առջև կանգ կառնեինք մտադուր, իբրև Մեսրոպի շնորհներովը կենդանագրված մաքուր կերպարանքի մը առջև: Իսկ հիմակ, իր մահն եռամյակ մը ետքը, նայվածքիս առջև իր խոսուն նկարը և սրտիս մեջ՝ իր խոկումն ու սերը, մինչ կկարդամ պատմահոր այդ հատվածը, վերստին կսենուվի իմ մեջս նույն համոզումը իր մասին. իր լուսատիպ ու այնքան ճշգրիտ պատկերեն ավելի՝ այդ տողերուն մեջ է, որ կտեսնեմ զինքը, իր հոգվույն այնքան ճիշտ թվումն մասանցովը, իր ձիրքերուն այնքան կենդանի արտահայտությունները նկարագրված:

Արդարև, իր ամենեն գործունյա եռանդի շրջանն, իր եպիսկոպոսացումն պիտի ուզեի ըսել՝ մինչև իր մահը, հայոց մտավորական եկեղեցականներուն մեջ, իրիմյանն և չափով մը Իզմիրլյանն զատ, դժվար պիտի ըլլար գտնել մեկը, որ նկարագրի բարձրությունը, մեկ բառով՝ առաքինությունը, հավասարեի իրեն. ինչ որ այս երկուքը ունեին իրենց անձին մեջ, իբրև հավատքով և հայրենասիրությամբ կազմված մեծություն, ինք ստացած էր զայն նաև իր զարգացումով: Իմաստասիրություն, գրականություն, բազմահմտություն, այս ամենը փոխարկված էին անոր մեջ բարոյականի. և ադո՛ր մեջ էր իր նկարագրին ամբողջ ձգողականությունը: Երբ միտքը կիջնե սիրտին մեջ, մարդը կատարելության ճամբան կգտնե անկե վերջը: Դուրյանի մեջ լրիվ կար այդ հոգեվիճակը, բարոյական բարձրության այդ սթանդինի գեղեցկությունը, Աստուծո և ճշմարտության մասին խորունկ և անկեղծ հավատքով մը ա՛լ ավելի աղվորացած: Հավատքի մարդն էր ինքը, այդ բառին ամենն անուշ և հզոր առումովը:

...Այսպիսի բարձր բարոյականի, զարգացման և կորովի ներգործությամբն էր, որ իր բովանդակ կյանքը եղավ ստույգ առաքինության հանդիսարան մը: Ծշմարիտ գիտնականի մը միայն վայելուլ բարքով, իր մեծ

հմտութենեն իրավունք չզգաց երբեք իրեն՝ խրոխտալ խոնարհներուն և սկսնակներուն հանդեպ, որոնց համար հարգանք և սեր միայն ունեցավ միշտ, ու անոնց շնորհները իր աջակցության և խրախույսին Իպաստը. իսկ մեծերու, դիրքի, տաղանդի և արժանիքի ստույգ բարձրությանց վրա ապրողներուն՝ պատկառանք ներշնչեց միշտ իր նկարագրի: Հոխորտ կեցվածքը և սողոսկող մարդահամությունը իսպառ անձանոթ մնացին իր խաղաղ և անբիժ հոգիին: Իր սրտին հեղ քաղցրությունը և մտքին բարյացակամ հաղորդականությունը մոգիչ գաղտնիքը եղան իր հմայքին տիրապետությանը՝ իր աշակերտներուն և բոլոր զինքը ճանչցողներուն վրա, մարդկային հասարակ մեծություններն վեր բարձրության մը վրա պահելով միշտ իր անձը:

Այն խոսքը՝ թե մարդուն դեմքն ու արտաքինը պատկերն են անոր հոգիին, լրիվ ճշմարտված էր կարծես իր վրա մանավանդ. իր նրբեմնի հասակին բարձրությանը, իր շնորհալի գնացքին ու շարժվածքին վայելչությանը, իր անուշ նայվածքին ու ժպիտին բարությանը, իր բեղուն խորհուրդներուն խորությանը, իր ջինջ ու դաշն ձայնին ազնվականությանը, իր հրաշալիորեն առինքնող վարվեցողության կերպին վեհությանը և ուսուցումի գաղափարին ու գործին հանդեպ տածած իր անձկայրաց և անձանձրույթ նվիրումին սրբությանը մեջ գեղեցկորեն կարտափայլեին իր ուղիղ Հավատքը, երկայնամիտ Հույսը և անկեղծ Սերը: Այնպիսի որ մեզի համար տխուր, բայց իր հոգիին համար երջանիկ օր մը, երբ անողորմ մահը անոր հանդիպեցավ անմահության սեմին վրա, իրեններն ու ամենքը անոր մեջ ողջունած էին արդեն ճշմարիտ արժանիքին մարդը, Հայ Եկեղեցվո երկրորդ Շնորհալին:

Մունկի եկած եմ իր հիշատակին առջև:
Հանգիստ իր հոգվուն:

(«Նդիշն պատրիարք Դուրյան»,
Երուսաղեմ, 1932)

